ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՄԱՆ ՄԱՅԻՍՅԱՆ ՓՈՐՁԸ (1920 Թ.) ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ

Կ. Պ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հայաստանի հանրապետությունը ձևավորվեց մի ժամանակաշրջանում, երբ Մեծ եղեռնից մազապուրծ եղած և Արևելյան Հայաստանում ապաստանած շուրջ 116 հազար արևմտահայ փախստականները[1] միջոցներ էին որոնում իրենց ֆիզիկական գոյությունը պահպանելու, իսկ հետագայում նաև հայրենիք վերադառնալու համար։ Արևմտահայ փախստականները և առանձնապես նրանց ղեկավար շրջանները ակտիվորեն մասնակցում էին Հայաստանի հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին։ Ահա թե ինչու արևմտահայ փախստականների ծանր ու հերոսական կյանքի և մաքառումների տարեգրությունը Հայաստանի հանրապետության պատմության կարևոր մասն է կազմում և նորովի ուսումնասիրության կարիք ունի։ Մինչդեռ առ այսօր մեզանում այդ ուղղությամբ համարյա ոչինչ չի արված։ Չի բացահայտված նաև Հայաստանի խորհրդայնացման հարցում արևմտահայ գաղթականների բռնած դիրքի պատճառները։ Մենք կանգ կառնենք խորհրդայնացման առաջին փորձի՝ 1920 թ. մայիսյան ելույթների նկատմամբ արևմտահայ փախստականների դիրքորոշման պատճառների և շարժառիթների վրա։

1920 թ. մայիսին խորհրդային իշխանությունն հաստատելու նպատակով Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում, Նոր Բայազետում, Դիլիջան-Իջևանում, Ղազախ-Շամշադինում և Զանգեզուրում կոմունիստների ղեկավարությամբ տեղի ունեցած հակակառավարական զինված ելույթները գտնվել են ինչպես խորհրդահայ, այնպես էլ սփյուռքահայ պատմաբանների ուշադրության կենտրոնում, արժանացել բազմազան և հակադիր գնահատականների։ Խորհրդահայ պատմագիտության մեջ այդ ելույթները գնահատվում են որպես «բանվորական, զինվորական և գյուղացիական լայն մի շարժում»[2], «մասսայական ապստամբություն»[3], «համաժողովրդական զինված ապստամբություն»[4]։ Կա նաև տեսակետ այն մասին, որ Մայիսյան ապստամբությունը վաղաժամ ելույթ էր, փաստորեն արկածախնդրություն[5]։ Դաշնակցության տեսաբաններն ու գործիչներն այդ ելույթները գիտել են որպես խռովություններ, «Հայաստանի անկախությունը խորտակելու և պետական իշխանությունը հափշտակելու փորձ»[6]։ Սակայն, չնայած 1920 թ. մայիսյան իրա-

---

1 Հասարակական-քաղաքական հետազոտությունների ինստիտուտի արխիվ (այսուհետև՝ ՀՔՀԻԱ), ֆ. 1, ց. 2, գ. 77, թ. 14—15։

2 Ա. Հովհաննիսյան, Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը. Մայիսյան ապստամբությունը, Երևան, 1923, էջ 45։

3 Շ. Ամիրխանյան, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, Մոսկվա, 1926, էջ 155։

4 Հովհ. Կարապետյան, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, Երևան, 1961, էջ 278, Գ. Գալոյան, Հերոսական մայիսից—հաղթական նոյեմբեր, Երևան, 1980, էջ 3։

5 Հովհ. Դուրգարյան, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (Կոմունիստ, 1927, №№ 9—10, էջ 94, 96)։

6 Ս. Վրացյան, Հայաստանը բոլշևիկների մուրճի և թրքական սալի միջև, Բեյրութ, 1953, էջ 95։

դարձություններին վերաբերող պատմական աշխատությունների մեծաքանակությանը և գնահատականների այդչափ բազմազանությանը, հայ պատմաբանները չկարողացան վեր կանգնել քաղաքական, միջկուսակցական պայքարի գաղափարական շաբլոններից և հրաժարվել քաղաքական պիտակներից։ Այդ պատճառով էլ նրանք ի վիճակի չեղան օբյեկտիվորեն վերլուծելու պատմական շրջանառության մեջ դրված փաստերի ամբողջությունը։

Մեր կարծիքով լիովին չեն բացահայտվել 1920 թ. մայիսին տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ արևմտահայ փախստականների դիրքորոշման պատճառները։ Խորհրդահայ մի շարք պատմաբաններ ցույց են տվել արևմտահայ գաղթականության դերը մայիսյան ելույթները ճնշելու գործում[7], մասնանշել Ալեքսանդրապոլի և Կարսի մայիսյան շարժումների հանդեպ արևմտահայ փախստականների թշնամական վերաբերմունքը[8], ընդգծել այն հանգամանքը, որ Սեպուհի պատժիչ ջոկատը բաղկացած էր հիմնականում արևմտահայերից[9]։ Միաժամանակ, անհրաժեշտ էր նշել, որ խորհրդահայ պատմաբանների մեծամասնությունը խոսում է միայն խմբապետական, մուզերիստական անդեմ ուժերի մասին՝ չբացահայտելով, թե ովքեր են դրա տակ թաքնված[10]։ Մայիսյան ելույթները ճնշելու գործում արևմտահայ փախստականների ունեցած դերը հստակորեն ընդգծված է նաև Հայաստանի հանրապետության գործիչների աշխատություններում[11]։

Թե՛ խորհրդահայ և թե սփյուռքահայ պատմաբանները փորձել են բացահայտել արևմտահայ փախստականների նմանօրինակ վերաբերմունքի դրդապատճառները։ Այսպես, Շ. Ամիրխանյանը գտնում էր, որ տաճկահայ գաղթական զանգվածներին «դաշնակցականները հրապուրում էին թալանների և գաղթական փայերով» և «նրա ղեկավարների միջոցով պահում էին իրենց ավանդույթների ազդեցության ներքո»[12]։ Իսկ Կ. Ղազարյանը նշում է. «Դաշնակցությունը փախստականներին կապելով հողի հետ՝ ցանկացավ բավարարել նրանց պահանջները, ցանկացավ գրավել քայքայված, դժգոհ գաղթականական մասսայի համակրանքը, հանձին նրա ամուր հենարան ստեղծել՝ կռվելու համար սպառնացող սոցիալիստական շարժման և նրա հեղինակների դեմ»[13]։ Խորհրդահայ պատմագիտության մեջ տեղ է գտել նաև այն տեսակետը, թե արևմտահայերի այդպիսի թշնամական վերաբերմունքն անմիջականորեն բխում էր դաշնակցության ղեկավարության կազմակերպած սադրանքներից[14]։ Կամ էլ խորհրդահայ պատմաբանները սահմանափակվում են «տաճկահայ սպեկուլյանտներ», «վխտացող գաղթականներ»[15], «արևմտա-

7 Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 30, Շ. Ամիրխանյան, նշվ. աշխ., էջ 166, Б. А. Бсрян, Армения Международная дипломатия и СССР, часть II, М.—Л., 1929. с. 105, 108.

8 Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 26, 32—33, Շ. Ամիրխանյան, նշվ. աշխ., էջ 113, Թ. Մանդալյան, Մայիսյան ապստամբությունը, Երևան, 1929, էջ 46։

9 Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 36, Շ. Ամիրխանյան, նշվ. աշխ., էջ 121, Հովհ. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 154։

10 Հատկանշական է, որ այդ միտումը խորհրդահայ պատմագիտության մեջ տարածում գտավ 1930-ական թվականներից։

11 Ա. Խատիսյան, Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը, Աթենք. 1930, էջ 188, Կ. Սասունի, Մայիսյան խռովությունները և թաթարական ապստամբ շրջանները (Հայաստանը 1920-ին), Բեյրութ, 1968, էջ 126։

12 Շ. Ամիրխանյան, նշվ. աշխ., էջ 88։

13 Կ. Ղազարյան, Մայիսյան ապստամբությունների նշանակությունը և տեղը Հայաստանի նորագույն պատմության մեջ (Ներածական ակնարկ), Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 1932, էջ 23)։

14 Մորուս, Հայաստանի մայիսյան ապստամբությունը և հակահեղափոխությունը (Նոր ուղի, գիրք 2-րդ, Երևան, 1932, էջ 203)։

15 Ա. Հովհաննիսյան, Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը. Մայիսյան ապստամբությունը, էջ 26, 30։

հայ գաղթականների մութ խավերը»[16] և նմանօրինակ այլ պիտակների օգտագործումով։

Բոլորովին այլ տեսանկյունից են հարցին մոտենում դաշնակցական գործիչները։ Ա. Խատիսյանը ուշադրություն էր դարձնում երկու հանգամանքների վրա։ Դրանք էին. «սերը դեպի անկախ Հայաստանի գաղափարը և որևէ կապի բացակայությունը ռուս զինվորական ոգիի հետ, որը համենայն դեպս գոյություն ուներ Ռուսաստանից եկած բոլշևիկյան տրամադրություններով տոգորված գործիչներու մեջ»[17]։ Իսկ Կ. Սասունին նշում է, որ մայիսյան խռովությունները հայ գաղթականությանը դրել էին երկընտրանքի առջև՝ կա՛մ անկախություն, կա՛մ հպատակություն Ռուսաստանին։ «Թրքահայ ամբողջ մասսան,—ընդգծում է նա,—թե գյուղացի, թե քաղաքացի, գիտակցականորեն և անձնվիրաբար, մեկ մարդու պես անկախության պաշտպան կանգնեցավ և գործով ցույց տվավ ատոր ապացույցը»[18]։ Ինչպես տեսնում ենք, վերջիններս մայիսյան ելույթների նկատմամբ արևմտահայերի թշնամական վերաբերմունքը կապում են Հայաստանի հանրապետության անկախությունը պահպանելու ձգտման, իսկ խորհրդահայ պատմաբանները՝ դաշնակցության նպատակամղված քաղաքականության հետ։ Փաստորեն, այս երկու տեսակետներում էլ կա որոշակի ճշմարտություն։ Սակայն նման միակողմանի մոտեցումը, պատճառների ամբողջության վերլուծության և, ամենակարևորը, դրանցից հիմնականի ճշգրիտ առանձնացման բացակայությունը հանգեցրել են իսկության քողարկմանը և պատմության աղավաղմանը։

Եվ այսպես, որն է այն հիմնական պատճառը, որ արևմտահայ փախստականների համար անընդունելի դարձրեց խորհրդայնացման առաջին փորձը։ Նրանց հուզող ամենակարևոր հարցը՝ հայրենի երկիր վերադառնալն էր։ Դա մի նպատակ էր, մի համատարած, ուժեղ ցանկություն, որ ցայտուն դրսևորվեց 1919 թ. գարնանը։ «Թյուրքերի հեռանալու լուրը,—գրում էր Ս. Վրացյանը,—էլեկտրական արագությամբ տարածվեց երկրի բոլոր մասերում և աննկարագրելի ցնծություն առաջ բերեց ամեն տեղ։ Սկսվեց տարերային մի շարժում։ Առանց սպասելու կառավարության կարգադրության, առանց նույնիսկ ճշտելու լուրի ճշտությունը գաղթականությունը ուղղվեց թափով դեպի սահման։ ...Կառավարության ճիգերը՝ կազմակերպելու և ծրագրավորված ձև տալու այդ հոսանքին՝ առանձին հաջողություն չունեցան։ Տարերքը ավելի ուժեղ էր»[19]։ Հատկանշական է, որ այդ լուրը նույն արագությամբ հասնում է նաև Ռուսաստանում ապաստանած փախստականներին, որոնք ևս նույն զգացմունքով համակված, ցանկություն են հայտնում վերադառնալ հայրենիք։ Այդ է վկայում Հայկական գործերի կոմիսարիատի 1919 թ. օգոստոսի «Հայ փախստականներին» ուղղված կոչը։ «Հայկական կոմիսարիատն անշուշտ գիտե ձեր շատերի բուռն ցանկությունը՝ հայրենիք վերադառնալու»[20],—նշվում էր այստեղ։ Արևմտահայ փախստականների այդ ցանկության, ազգային այդ նպատակի իրագործումը, հասկանալի է, անհնար էր առանց Արևմտյան Հայաստանի հարցի լուծման։ Նրանց համար ամենակենսական այդ հարցի լուծման խնդիրն էր, որն էլ ծնեց Հայաստանի խորհրդայնացման հանդեպ արևմտահայ փախստականների թշնամական դիրքորոշումը։ «Թուրքահայաստանի ճակատագրի հարցը,—նշում էր Վ. Տերյանը,—եղել է հայ կյանքի ամենասուր, ամենածանր, ամենացավոտ հարցը։ Արդեն շատ տասնյակ տարիներ ոչ միայն հայ ինտելիգենցիայի, այլև բանվորական ու գյուղացիական դեմոկրատիայի ամենալայն մասսաների բոլոր մտքերն ու ամբողջ ուշադրությունը պինդ գամված են եղել հայկական կյան-

---

16 Գ. Գալոյան, նշվ. աշխ., էջ 91։

17 Ա. Խատիսյան, նշվ. աշխ., էջ 188։

18 Կ. Սասունի, նշվ. աշխ., էջ 126։

19 Ս. Վրացյան, Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը, էջ 223։

20 ՀՔՀԻԱ, ֆ. 4033, ց. 1, գ. 437, թ. 1։

քի այդ «անիծյալ» հարցին»[21]։ Եթե մինչև 1917 թ. վերջերը հայ հասարակական-քաղաքական բոլոր ուժերը գտնում էին, որ ելնելով պատմական իրավիճակից առայժմ նպատակահարմար է երկու Հայաստանների՝ անկախ Արևմտյան Հայաստանի և Ռուսաստանի կազմում ինքնավար Արևելահայաստանի գոյությունը[22], ապա պատմական նոր պայմաններում արևմտահայերը այդ տեսակետն էապես փոխվեց։ Դրանում մեծ նշանակություն ունեցան հայ ժողովրդի համար ճակատագրական մի շարք իրադարձություններ՝ Կովկասյան ճակատի փլուզումը և թուրքական զորքերի ներխուժումը Հայաստան, Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից, ինքնապաշտպանական կռիվները և Հայաստանի հանրապետության կազմավորումը, դաշնակիցների հաղթանակն առաջին աշխարհամարտում և Ռուսահայաստանի տարածքից թուրքական զորամասերի հեռացումը։ «Համաշխարհային պատերազմը վերջացավ. մեր դաշնակիցները հաղթեցին, մենք հաղթեցինք,—նշվում էր «Արևմտյան Հայաստանի փախստական հայությանն» ուղղված Արևմտահայ II համագումարի կազմակերպիչ կոմիտեի կոչում,—սակայն Արևմտյան Հայաստանի տարագիր հայությունը գեռ չկարողացավ իր նպատակներու և իտեալներու ամփոփված ձևակերպությունը հրապարակել և ինքն ալ մասնակից ըլլալ անոնց իրականացման»[23]։ Արևմտահայ փախստականների այդ նպատակները պատմական նոր պայմաններում ձևակերպվեցին Արևմտահայ II համագումարում, որը տեղի ունեցավ Երևանում՝ 1919 թ. փետրվարի 6-ից 13-ը։

Արևմտահայ II համագումարում առաջին հերթին դրսևորվեց արևմտահայ փախստականների՝ հայրենի երկիր վերադառնալու ցանկությունը։ Ընդ որում, համագումարի պատգամավորները համոզված էին, որ «արևմտահայ փախստականներու ներգաղթը դեպի իրենց ծննդավայրը» տեղի է ունենալու «մոտիկ ապագային»[24]։ Այդ նկատի ունենալով, «Ներգաղթի մասին» բանաձևում համագումարը պարտադրում էր ընտրվելիք գործադիր մարմնին «այժմեի անհրաժեշտ միջոցներու ձեռնարկել պատմական Միացյալ Հայաստանի կառավարության մոտ և դաշնակիցներու ներգործուն միջամտությամբ և աջակցությամբ պետականորեն ապահովելու ներգաղթող ժողովրդի ֆիզիկական գոյությունը և պարենավորման անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև անոր հետևող վերաշինության գործի իրականացման անհրաժեշտ տրվյալները հավաքելու»[25]։

Հայրենիք վերադառնալու ցանկության իրականացումը արևմտահայ փախստականների ներկայացուցիչները տեսնում էին միացյալ և ազատ Հայաստանի անկախության մեջ։ Այդ էր պատճառը, որ Արևմտահայ II համագումարը 1919 թ. փետրվարի 11-ին միաձայն և մեծ ոգևորությամբ հռչակեց միացյալ և ազատ Հայաստանի անկախությունը[26], հայտարարելով «իր վճռական որոշումն ու կամքը՝ ունենալ քաղաքական և պետական մեկ միություն համազգային հատվածներու և երկրամասերու միավորությամբ»[27]։ «Կովկասի մեջ ապաստանած արևմտահայությունը մեծապես շահագրգռված էր անկախության հռչակման խնդրով»,—նշում էր արևմտահայ ճանաչված գործիչ Կ. Սասունին[28]։ Եվ դա հասկանալի էր հատկապես Բրեստ-Լիտովսկից հետո։

---

21 Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1979, էջ 353։

22 Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. 7, Լոս Անջելես, 1952, էջ 126։

23 ՀՀ պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 199, ց. 1, գ. 23, մաս 1, թ. 31։

24 Համառոտ Տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի և Կազմակերպիչ կոմիտեի հաշիվը, Թիֆլիս, 1919, էջ 12։

25 Նույն տեղում։

26 Ժողովուրդ, Երևան, 21. II. 1919։

27 Համառոտ տեղեկագիր..., էջ 13։

28 Կ. Ասունի, նշվ. աշխ., էջ 19։

Միայն անկախ հայ պետականությունը կարող էր ապահովել արևմտահայերի ազգային-քաղաքական նպատակների իրագործումը։

Արևմտահայ II համագումարն իր ընտրած գործադիր մարմնին պարտագրում էր «գործնական քայլեր առնել՝ Արարատյան Հանրապետության նախարարության և խորհրդարանի հետ Միացյալ Ազատ Հայաստանի անկախությունը հայտարարելու և իր մասնակցությունը բերելու գոյություն ունեցող պետական և օրենսդրական հաստատությունների մեջ համազգային միությունը իրականացնելու համար»[29]։ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, նկատի ունենալով Արևմտահայ II համագումարի կողմից միացյալ և ազատ Հայաստանի անկախության հռչակումը և նպատակ ունենալով վերականգնել Հայաստանի ամբողջությունը, 1919 թ. մայիսի 28-ին հանդիսավոր պայմաններում հայտարարեց միացյալ Հայաստանի անկախության ակտը։ Այն ազդարարում էր, որ «Ներկայումս Հայաստանի ժողովուրդն է իր ամբողջացած հայրենիքի գերագույն տերն ու տնօրենը, և Հայաստանի Պառլամենտն ու Կառավարությունը հանդիսանում են Միացյալ Հայաստանի ազատ ժողովուրդը շաղկապող բարձրագույն օրենսդիր և գործադիր իշխանությունը»[30]։ «1919 մայիս 28-ի Ակտը՝ Միացյալ և Անկախ Հայաստանի հայտարարությունը,—նշում էր Մ. Տեր-Մինասյանը,—մասամբ ի նկատի ուներ թրքահայ բաղձանքներին բավարարել, և վերացնել թրքահայ Ազգային Խորհուրդի և Հայրենակցական Միությանց այն գաղափարը՝ որ ներկա Հայաստանը՝ միայն իրենց խորթ; «Արարատյան Հանրապետություն» մրն է»[31]։

Հայաստանի խորհրդայնացման համար պայքարող հայ կոմունիստների զգալի մեծամասնությունը մերժեց միացյալ և անկախ Հայաստանի գաղափարը, առավել ևս նրանց համար անընդունելի էր արևմտահայերի կողմնորոշումը դեպի դաշնակից տերությունները։ Մասնակցելով Արևմտահայ I համագումարին (1917 թ. մայիս), հայ կոմունիստները երկրորդը պարզապես անտեսեցին։ Համագումարի հրավիրման կապակցությամբ կոմունիստների «Խոսք» թերթը հանդես եկավ «Արևմտահայ Բ համագումարի առիթով» մի հոդվածով, որն ավարտվում էր հետևյալ եզրակացությամբ. «Այո, մի համագումարից, որին կարող են մասնակցել միայն Երևանի նահանգի արևմտահայերը, և այն էլ նրանց մի մասը, և որը ամենայն հավանությամբ կընտրի մի նոր մարմին, էլի խմբապետներից ու ջոջերից, նրանց կը հանձնի արևմտահայ փախստականների բաղդի տնօրինումը, մենք ոչինչ չենք սպասում»[32]։ Իսկ «Համագումարից հետո» վերնագիրը կրող հոդվածում նշված էր, որ «սկզբից ևեթ մեր (կոմունիստների—Կ. Հ.) վերաբերմունքը այս համագումարի հանդեպ եղել է բացասական» և դա բացատրվում է նրանով, որ «այս համագումարի աթոռներին պատահականորեն բազմած պատգամավորները... բռնկած էին քաղաքական մեծամեծ ու հսկայական ակտեր կատարելու տենչով։ Միացյալ և անկախ Հայաստան. «Ղարաբաղի լեռներեն մինչև Կիլիկիոյ դրունք», Պողոս Նուբարի կառավարության, Պարիզի վեհաժողովը կատարված իրականության առջև դնել ևն, ևն։ Մեծախոսություններ, թղթե ծրագիրներ, սապոնային ճառեր, երեխայական անմիտ ոգևորություն, ահա համագումարի պատկերը»[33]։

Անդրկովկասի հայ բոլշևիկները, նրանց գործիչների մեծամասնությունը, այդ թվում նաև Ստ. Շահումյանը, 1917—1918 թթ. կանգնած լինելով Ռուսաստանի խորհրդային կառավարության «Թուրքահայաստանի» մասին դեկրետի» դիրքի վրա, գտնում էին, թե ցանկալի է, «որ Տաճկահայաստանն ան-

---

29 Համառոտ Տեղեկագիր...., էջ 13—14։

30 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 4, թ. 1։

31 Ռուբեն, նշվ. աշխ., էջ 152—153։

32 Խոսք, Երևան, 31. I. 1919։

33 Նույն տեղում, 8. III. 1919։

կախ լինի, իսկ Ռուսահայաստանը՝ Ռուսիայի հետ ներքին ինքնավարությամբ հանդերձ...»[34]։ Ստ. Շահումյանը բազմիցս նշել է, որ Արևմտահայաստանի ինքնորոշման հարցը պետք է դնել առանձին, չկապելով այն Արևելահայաստանի հետ։ «Ազգային հարցի լուծման ժամանակ անխուսափելիորեն դրվում է նաև Թուրքահայաստանի հարցը,—գրում էր նա։—այդ հարցի լուծումը մենք պետք է թողնենք հենց այդ մարզի բնակչությանը, որն ինքը պետք է որոշի իր բախտը։ Ռուսաստանին միանալու նրանց որոշման դեպքում նրանք պետք է միացվեն հայերին»[35]։ Մնալով անփոփոխ, այդ դիրքորոշումը պատճառ է միացվեն հայերին»[35]։ Մնալով անփոփոխ, այդ դիրքորոշումը պատճառ է դարձավ, որ հետագայում հայ բոլշևիկները մերժեցին Արևմտահայ II համագումարի և Հայաստանի կառավարության կողմից ընդունված միացյալ համագումարի և Հայաստանի կառավարության կողմից ընդունված միացյալ և անկախ Հայաստանի գաղափարը, իրենց գործունեությունը սահմանափակելով Արևելահայաստանի գավառներով։

Իսկ հայ կոմունիստների մի խումբ՝ Ա. Միկոյանը և իր համախոհները, գտնում էին, որ «Թուրքահայաստանի» մասին դեկրետը «մեծ սխալ էր»։ «Պատերազմից հետո ստեղծված իրավիճակում Հայկական հարցի նկատմամբ այդպիսի քաղաքականությունը,—գրում էր Ա. Միկոյանն իր «Կովկասյան հարցի առթիվ» զեկուցման թեզիսներում,—անհոգի է, սխալ և մինչև անգամ շատ վնասակար, քանի որ հակասում է համաշխարհային հեղափոխության և իմպերիալիզմի դեմ պայքարի շահերին»[36]։ Այդ քաղաքականության հեղինակները, ըստ Ա. Միկոյանի, ելնում էին Արևմտյան Հայաստանի և արևմտահայերի նախապատերազմական վիճակից, մինչդեռ, այժմ Արևմտյան Հայաստանում բառիս բուն իմաստով հայ չի մնացել և Հայկական հարցի նման լուծումն առաջ է բերում մուսուլմանական Արևելքի դժգոհությունը խորհրդային Ռուսաստանից, իսկ դա նշանակում է արգելակել իմպերիալիզմի դեմ Արևելքի մուսուլմանների ապստամբությունը։ «Արդյոք կարող է կոմունիստական կուսակցությունը պաշտպանել «Մեծ և անկախ Հայաստանի» այդ ծրագիրը, այդ գաղափարը»,—հարց էր տալիս բոլշևիկյան կուսակցության Կովկասի երկրային կոմիտեի անդամ Ա. Միկոյանը և պատասխանում. «Մեր կուսակցությունը չի կարող պաշտպանել ո՛չ «Մեծ», ո՛չ «Փոքր» Թուրքահայաստանը։ Չէ որ ազգերի ինքնորոշման իրավունքը մեզ համար հանդիսանում է ոչ թե պատմական, այլ իրական իրավունք իրոք գոյություն ունեցող ժողովրդի համար»[37]։ «Թուրքահայաստանի և ընդհանրապես «Մեծ, միացյալ և անկախ Հայաստանի» գաղափարը հանդիսանում է վնասակար, հանցավոր և հետադիմական ցնորք, որի դեմ պետք է պայքարի մեր կուսակցությունը»,—եզրահանգում էր Ա. Միկոյանը[38]։

Միացյալ և անկախ Հայաստանի գաղափարի, Արևմտյան Հայաստանի, Հայկական հարցի նկատմամբ այս դիրքորոշումը հետզհետե դառնում է գերիշխող Անդրկովկասի բոլշևիկների, այդ թվում նաև հայ կոմունիստների շրջանում։ Եվ 1920 թ. սեպտեմբերին Արևելքի ժողովուրդների համագումարում այդ դիրքորոշումը ստանում է արդեն իր վերջնական պաշտոնական հաստատումը։ Արևմտահայ II համագումարում մշակված միացյալ և անկախ Հայաստանի գաղափարի և ընդհանրապես Հայկական հարցի նկատմամբ հայ կոմունիստների դիրքորոշումով է բացատրվում արևմտահայ փախստականների կողմից Հայաստանի խորհրդայնացման առաջին փորձը ճնշելու փաստը։ Իհարկե արևմտահայ փախստականները, ամենայն հավանականությամբ, ծանոթ չէին հայ կոմունիստների այն կուռ համապարփակ դիրքորոշման հետ, որն արտացոլված էր Ա. Միկոյանի զեկուցման թեզիսներում։ Բայց նրանք տեսնում էին այդ դիրքորոշման վրա հիմնված բոլշևիկյան կուսակցության

---

34 Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 325։

35 Ստ. Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1978, էջ 270։

36 ՀՊՀԻԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 306, թ. 2։

37 Նույն տեղում, թ. 4։

38 Նույն տեղում, թ. 5։

քաղաքականության առանձին դրսևորումները, որոնք լիովին անընդունելի էին արևմտահայ փախստականների համար։

Առաջին հերթին անհրաժեշտ է նշել արևմտահայերի և բոլշևիկների հակադիր դիրքորոշումը Հայաստանի անկախության հարցում։ 1919—1920 թթ. ընդունելով խորհրդային անդրկովկասյան առանձին հանրապետությունների վերաբերյալ կարգախոսները, բոլշևիկյան կուսակցությունը բնավ չէր հանդուրժում նրանց անկախ գոյությունը, այլ տեսնում էր այդ հանրապետությունները խորհրդային Ռուսաստանի կազմում՝ ներքին ինքնավարության իրավունքով։ «Մենք, Կովկասի բոլոր ժողովուրդների աշխատավոր մասսաներս, միջազգային պրոլետարիատի հանդեպ ձեզ դիմելու ներկա ակտով հայտարարում ենք, որ մենք արհամարհում ենք անկախության այն լոզունգը, որ հռչակել է Կովկասի ազգարնակչության փոքրամասնությունը՝ Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի «կառավարություններին» պատկանող մեր ճնշողների ու բռնադատիչների բերանով,—նշվում էր Կովկասի աշխատավորների անունից խորհրդային Ռուսաստանին հղած բոլշևիկների Կովկասի երկրային կոմիտեի դիմումում։—Մենք գիտենք, որ նրանք այդ լոզունգով Սովետական Ռուսաստանից անկախություն են ցանկանում՝ հանուն կովկասյան կապիտալիստների, կալվածատերերի և կուլակ-ցեցերի...»[39]։ Մերժելով նման անկախությունը, տեղի բոլշևիկները խորհրդայնացման հարցի լուծումը չէին պատկերացնում առանց խորհրդային Ռուսաստանի, նրա կարմիր բանակի անմիջական աջակցության[40]։ Իսկ դա, ինչպես կարծում էին արևմտահայերը, կնշանակեր Հայաստանի հպատակությունը Ռուսաստանին, հրաժարումը միացյալ և անկախ Հայաստանից։ «Միացյալ և անկախ Հայաստանը ծնունդ կառներ Ռուսաստանի դար մը առաջ գրաված մի քանի գավառներեն և այդ մեծ մարմինեն պզտիկ կտոր մը նույնիսկ պոկելը հաճելի պիտի չըլլար ո՛չ Դենիկենին, ոչ ալ Լենինին»[41],—գտնում էին նրանք։

Հայկական անկախ պետություն կազմելու արևմտահայերի ձգտումի արդյունքն էր 1919 թ. մայիսի 28-ի Միացյալ Հայաստանի անկախության ակտը։ Չնայած դրան, արևմտահայ փախստականների, նրանց ղեկավար շրջանների մի մասը միանշանակ ձևով չընդունեցին այդ ակտի հռչակումը և արևմտահայ 12 քաղաքական գործիչներին Հայաստանի խորհրդի կազմում ընդգրկելը, ինչպես նաև հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցած հետագա անցքերը՝ Արևմտահայ II համագումարի ընտրած գործադիր մարմնի վերացումը, արևմտահայ երիտասարդությանը գործող բանակ զորակոչելը, Հ. Հ. Դաշնակցության արևմտահայ առանձին ղեկավար մարմինների վերացումը և այլն։ Բանը հասել էր նրան, որ Հ. Հ. Դաշնակցության արևելյան բյուրոն 1919 թ. հունիսի 17-ի նիստում ստիպված էր արձանագրել, որ «արևմտահայ մասսաները դժգոհ են այս կառավարությունից և չեն կարող հաշտվել այն մտքի հետ, թե այս կառավարությունը միացյալ Հայաստանի կառավարությունն է»[42]։ Սակայն արդեն 1920 թ. սկզբներից արևմտահայերը ստիպված էին ընդունել, որ Հայաստանի հանրապետության կառավարությունը հենց ինքը միացյալ և անկախ Հայաստանի կառավարությունն է։ Նախ 1920 թ. հունվարին դաշնակից տերությունները «դե ֆակտո» ճանաչեցին Հայաստանի հանրապետությունը և սպասվում էր Փարիզի հաշտության համաժողովի որոշումը Արևմտահայաստանի մասին։ «Այսօր ողջ հայությունը,—ասվում էր հայ սոցիալ-դեմոկրատների 1920 թ. մայիսին հրապարակված «Անկախության տոնը» կոչում,—ջերմ փափագով սպասում է իր միացյալ և անկախ հայրենիքի գաղափարի և իրա-

---

39 Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 1960, էջ 311։

40 Նույն տեղում, էջ 310, 312։

41 Կ. Մասունի, նշվ. աշխ., էջ 17։

42 ՀՔՀԻԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 144, թ. 1։

վական ճանաչումը, և փաստորեն իրականացումը»[43]։ Իսկ մայիսյան զինված ելույթներով «վերջին անբուժելի հարվածը կուտան լուծման օրերու մեջ գտնվող հայկական հարցին,—նշվում էր ռամկավար կուսակցության 1920 թ. մայիսի 14-ի կոչում,—տարակույս չկա, որ ամեն հայ մարդ որ իր երակներու մեջ հայ արյուն կկրե, և իր գլուխին մեջ փոքր-ինչ խելք, կդատապարտե այդպիսի խելագար շարժումը, ևս առավել թյուրքահայերս, որ անոր անմիջական հետևանքները պիտի կրենք։ Այդ շարժումն ինչ տեսակ շարժառիթներ ալ ունեցած լինի, չի կրնար արդարանալ և մենք մասնավորապես պետք է ծառանանք անոր դեմ և մեր բոլոր ուժերը իսպառ դնենք կառավարության, իր բնին մեջ խեղդելու զայն և շեղեցնելու իր ոճրադավ նպատակեն»[44]։

Նույն «այդ ժամանակ պարզ և որոշ էր, որ ոչ մեկ եվրոպացի զինվոր պիտի չգար Հայաստան՝ Փարիզի մեծ ժողովին որոշումները իրագործելու»[45]։ Մինչդեռ Արևմտահայ II համագումարը պահանջում էր «Աղատ և Միացյալ Հայաստանի պետական գոյության երաշխավորումը՝ դաշնակից պետություններու քաղաքական, տնտեսական և ռազմական օժանդակությամբ և աջակցությամբ»[46]։ Մնում էր միակ իրական ուժը՝ իրեն միացյալ և անկախ Հայաստան հայտարարած Հայաստանի հանրապետությունը։ Բնականաբար, որևէ ոտնձգություն Հայաստանի հանրապետության անկախության հանդեպ արևմտահայերը դիտում էին որպես ոտնձգություն միացյալ և անկախ Հայաստանի, նրանց Արևմտահայաստան վերադառնալու ցանկությունը երաշխավորող միակ իրական ուժի նկատմամբ։ Պատահական չէր իր զեկուցման թեզիսներում Ա. Միկոյանը նշում, որ «Հայկական հարցում հին դիրքորոշումից կառչելը, անկախ Թուրքահայաստանի գաղափարի պաշտպանելը նշանակում է լինել «ազատագրված» Կովկասյան Հայաստանի շովինիստական հետադիմական կառավարության և նրա հովանավորող՝ Ազգերի Լիգայի հետ, ընդդեմ Անատոլիայի մուսուլմանական բնակչության և բազմամիլիոնանոց մուսուլմանական Արևելքի ալեկոծված ծովի...»[47]։

Ելնելով համաշխարհային հեղափոխությունն Արևելքում տարածելու իրենց նպատակներից, հայ բոլշևիկները կոչ էին անում Ադրբեջանի, Տաճկաստանի և Պարսկաստանի կոմունիստական կազմակերպությունների հետ «ֆրոնտ կազմել այդ երկրներում կոմունիստական հեղափոխության համար և մեծ, կարմիր Ռուսաստանի աջակցությամբ խորտակելով Անտանտայի բոլոր սև և մութ ուժերը՝ անցնել մեր թշնամիների դիակների վրայից ու միանալ համաշխարհային մեծ ու խաղաղ կոմունիստական ընտանիքին»[48]։ «Արևմտահայությունն սարսափով կը լսեր,—գրում է Կ. Սասունին,—անոնց (կոմունիստների—Կ. Հ.) կոչերը, կարմիր Թուրքիո և Խորհրդային Ատրպեյճանին միանալու և ամբողջ Արևելքը հեղաշրջելու նշանախոսքերով։ Մեկ միլիոն ազգակիցներ կորսնցնելե ետք, արևմտահայ գյուղացիները շատ փորձված էին չխաբվելու այդպիսի կոչերեն...»[49]։ Այդ հասկանում էին նաև հայ բոլշևիկները, իրենց զեկուցագրերից մեկում նշելով, որ արևմտահայերը «երբեք չեն հաշտվի խորհրդային իշխանության հետ, որը գտնվում է դաշինքի մեջ հեղափոխական Թուրքիայի հետ»[50]։ Իսկ այդ դաշինքի մասին դեռևս 1920 թ. փետրվարի 20-ին Հայաստանի խորհրդարանի նիստում զեկուցում էր ներքին գործերի նախարարը[51]։

---

43 Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 1932, էջ 358։

44 Նույն տեղում, էջ 370։

45 Կ. Սասունի, նշվ. աշխ., էջ 13։

46 Համառոտ Տեղեկագիր..., էջ 14։

47 ՀՔՀԻԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 306, թ. 4։

48 Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան..., էջ 299։

49 Կ. Սասունի, նշվ. աշխ., էջ 31—32։

50 ՀՔՀԻԱ, ֆ. 1, ց. 1, գ. 18, թ. 1։

51 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 64, թ. 22—23։

Ի՞նչ էր սպասում արևմտահայ փախստականներին Հայաստանի խորհրդայնացումից հետո։ «Կովկասում գտնվող թրքահայ փախստականների նկատմամբ մենք կարող ենք անել միայն մեկ բան,—գրում էր Ա. Միկոյանը,—նրանց վերադարձնել հայրենիք այն բանից հետո, երբ այժմյան (Կովկասյան) Հայաստանի հաստատված ապագա խորհրդային իշխանությունը ոչ միայն խոսքով, այլև գործնականում կհրաժարվի Մեծ Հայաստանի գաղափարից, կդադարի ատամներ սրել Թուրքիայի վրա, մեկընդմիշտ վերջ կդնի Հայաստանում մուսուլմանների հալածանքի քաղաքականությանը, և նվաճելով մուսուլմանական մասսայի վստահությունը, կկարողանա հաստատել բարիդրացիական հարաբերություններ թուրք ժողովրդի և հայերի միջև և կվերադարձնի այս վերջիններին Թուրքիա, նրանց բնակության վայրերը։ Դա հանդիսանում է...իրական, միակ հնարավոր ելքը ստեղծված իրավիճակից»[52]։ Այս մոտեցումը որդեգրած հայ կոմունիստները, ի դեմս Ս. Մուսայելյանի, մայիսյան ելույթների օրերին առաջարկում էին. «Թուրքերը պետք է վերադարձնել իրենց հողերուն վրա։ Իսկ այդ հողերը մշակող հայ աշխատավորներուն պետք է օգնել իբրև գաղթականներու, ինչպես էին մեկ տարի առաջ»[53]։ Պատահական չէ, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո հայ բոլշևիկները ձեռնամուխ եղան այդ քաղաքականության իրագործմանը։

Այսպիսով, 1920 թ. մայիսին արևմտահայ փախստականները, նրանց ղեկավար շրջանները վճռականորեն հանդես եկան կոմունիստների ղեկավարած խորհրդայնացման փորձի դեմ և մեծ դեր խաղացին մայիսյան զինված ելույթները ճնշելու գործում։ Այդ հակամարտությունը արևմտահայերի և հայ բոլշևիկների միջև անխուսափելի էր, որովհետև վերջիններս, ի վերջո հրաժարվելով «Թուրքահայաստանի» մասին դեկրետի սկզբունքներից, թշնամական վերաբերմունք դրսևորեցին միացյալ և անկախ Հայաստանի գաղափարն իրականացնելու շնորհիվ հայրենիք վերադառնալու արևմտահայերի ազգային-քաղաքական սրբազան նպատակի նկատմամբ։ Բոլշևիկների նման վերաբերմունքի հիմքում ընկած էր Արևելքում համաշխարհային հեղափոխության տարածման խնդիրը։ Բոլշևիկյան կուսակցությունը, հաշվի առնելով Արևելքի մուսուլմանական տարրի գերիշխումը և կողմնորոշվելով դեպի Թուրքիայում Մ. Քեմալի գլխավորած ազգային շարժումը, միացյալ և անկախ Հայաստանի գաղափարի համար պայքարող հայ ազգային-ազատագրական շարժումը որակավորում էր որպես հետադիմական, զավթողական, «իմպերիալիստական» շարժում[54]։ Արևմտահայերի առջև դրված էր երկընտրանք՝ կա՛մ հրաժարվել այդ նպատակից, կա՛մ զենքը ձեռքին ճնշել բոլշևիկների ղեկավարած շարժումները։ Հետևաբար, արևմտահայերի կողմից մայիսյան ելույթների ճնշումն օրինաչափ հակահարված էր հայ բոլշևիկների հակազգային ծրագրերին։

МАЙСКАЯ (1920 Г.) ПОПЫТКА СОВЕТИЗАЦИИ АРМЕНИИ И ЗАПАДНОАРМЯНСКИЕ БЕЖЕНЦЫ

К. П. АЙРАПЕТЯН

Резюме

В мае 1920 г. западноармянские беженцы, их руководящие круги решительно выступили против первой попытки советизации Армении. Это было неизбежно, так как армянские коммунисты проявили отрицательное отношение к провозглашенной Вторым съездом западных армян (февраль 1919 г.) идее объединенной и независимой Армении. В реализации этой идеи последние видели возможность для беспре-

52 ՀՔՀԻԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 306, թ. 6։

53 Կ. Մասունի, նշվ. աշխ., էջ 79։

54 ՀՔՀԻԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 306, թ. 5։

пятственного возвращения на родную землю. Перед западноармянскими беженцами стояла альтернатива: или отказаться от этой цели, или выступить против советизации Армении. Они сделали свой выбор, с оружием в руках приняв участие в подавлении руководимых армянскими коммунистами майских 1920 г. антиправительственных вооруженных выступлений.

MAY (1920) ATTEMPT OF SOVIETIZATION OF ARMENIA AND WEST-ARMENIAN REFUGEES

K. P. HAIRAPETIAN

S u m m a r y

In May of 1920 west-Armenian refugees, their leading spheres resolutely came out against of the first attempt of sovetization of Armenia. It was inevitable, as Armenian communists displayed a negative attitude to the idea of United and Independent Armenia, announced by the Second Congress of west Armenians (February, 1919). In realization of this idea the latters saw an opportunity for the free return the native land. An Alternative stood before west-Armenian refugees: to decline from this aim or to come out against the sovietization of Armenia. They did their choice, arms in hands taking part in suppression of May 1920 anti-governmental armed actions, led by Armenian communists.